

ՀԻՄՆԱՎՈՐ ԿԱՍԿԱԾԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Պավիթ Ավետիսյան

*ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Ներկայումս ՀՀ-ում իրականացվող դատաիրավական բարեփոխումները կոչված են ապահովելու ողջ իրավական համակարգի և մասնավորապես քրեական արդարադատության ժողովրդավարացումը, անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Անվիճելի է, որ իրավական պետության անբաժան հատկանիշներից մեկը օրենքի և իրավունքի գերակայությունն է, պետական մարմինների, պաշտոնատար անձանց և անձի փոխհարաբերություններում կամայականության ու ապօրինությունների անթույլատրելիությունը, ինչպես նաև պետական հարկադրանքի սահմանափակումը միայն այն դեպքերով, երբ այն իրոք անհրաժեշտ է հասարակության և այլ անձանց շահերի պաշտպանության համար:

Քրեական գործերի քննության ընթացքում դատավարական հարկադրանքի միջոցները կիրառելիս հատկապես սուր է դրսևորվում քրեական դատավարության երկու հիմնական հակադրությունների՝ հանրային և մասնավոր շահերի բախումը: Մի կողմից՝ մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի միջոցների ընտրությունը պայմանավորված է քրեական դատավարության խնդիրների լուծման պատշաճ հնարավորություն ապահովելու անհրաժեշտությամբ, մյուս կողմից՝ դա հակասում է իր իրավունքների և ազատությունների սահմանափակում թույլ չտալու անձի շահագրգռվածությանը: Այս տարբերությունները ստիպում են փնտրել փոխզիջումային լուծումներ՝ քրեական դատավարությունում անձի, հասարակության և պետության շահերի հավասարակշռված պաշտպանություն ապահովելու նպատակով¹:

Նման լուծումների ամբողջական տրամաբանություն է ընկած նաև քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հիմքում, որում, ելնելով հենց քրեական գործերի քննության և լուծման ընթացքում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը իրավունքի հանրաճանաչ սկզբունքների հիման վրա ապահովելու հայեցակարգային² ուղղությունից (1.16 կետ), ինչպես նաև դատավարական հարկադրանքի միջոցների կիրառումը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու հանգամանքից, հիմնովին փոփոխության է ենթարկվել խափանման միջոցների և մասնավորապես կալանավորման ինստիտուտը: Փորձ է արվել արմատապես վերանայելու կալանավորում կիրառելու հիմքերը, պայմանները, ընթացակարգերը, սահմանվել են կալանավորում կիրառելու դեպքերը նվազեցնելու որոշակի լրացուցիչ երաշխիքներ և այլն: Այդուհանդերձ, դրականի հետ միաժամա-

¹ Տե՛ս **Мельников В. Ю.**, Обеспечение прав граждан в ходе досудебного производства. М., 2006, с. 4.

² Հաստատվել է ՀՀ կառավարության 2011թ. մարտի 10-ի թիվ 9 արձանագրային որոշմամբ:

նակ գոյություն ունեն լուծումներ, որոնք առանձին դեպքերում կարող են առաջացնել նոր հարցեր: Այս առումով հատկապես խնդրահարույց է խափանման միջոց կիրառելու այնպիսի պայմանի բովանդակության և սահմանների որոշման հարցը, ինչպիսին է «հիմնավոր կասկած» հասկացությունը:

«Հիմնավոր կասկած» հասկացության բովանդակության և սահմանների որոշման արդիականությունը պայմանավորված է նրանով, որ Նախագծում (116-րդ հոդված) հիմնավոր կասկածը մի դեպքում՝ ներկայացվում է որպես խափանման միջոց կիրառելու պայման (մաս 1-ին), մյուս դեպքում՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների մեջ մեղադրվող անձի սկզբնական կալանքի և այլընտրանքային առանձին խափանման միջոցների կիրառման բավարար հիմք (մաս 3-րդ): Վերջին դեպքում չի պահանջվում խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը հիմնավորող լրացուցիչ հանգամանքներ՝ 1) մեղադրյալի փախուստը կանխելը, 2) մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելը, 3) մեղադրյալի կողմից իր վրա օրենքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելը:

Եթե միայն ծանր և առանձնապես ծանր հանցանքի մեջ մեղադրվելու դեպքում միայն հիմնավոր կասկածի հիմքով անձի նկատմամբ կալանքի կիրառումը համարվում է իրավաչափ, ապա բնականաբար խնդիր է առաջանում դրա բովանդակությունը և սահմանները հստակ որոշելու, որպեսզի անբարեխիղճ իրավակիրառողների կողմից այն չարաշահումների չենթարկվի: Այստեղ է, որ հարց է առաջանում, թե ինչ պետք է հասկանալ հիմնավոր կասկած ասելով, այն ինչ բովանդակություն ունի, և արդյոք դատարանն իրավունք ունի ստուգելու և զնահատելու հիմնավոր կասկածի բովանդակությունը և որոշելու դրա սահմանները: Այս հարցերի պատասխանը Նախագծում տրված չէ կամ գոնե հստակ չէ, ինչը և պատճառ է հանդիսանում մասնագետների շրջանում խորը հակասությունների առաջացման, հատկապես երբ խոսքը վերաբերում է միայն այդ հիմքով կալանք կիրառելուն³: Միայն հանցանքի ծանրությամբ կալանավորման իրավաչափության հարցերին մենք արդեն անդրադարձել ենք, ուստի չկրկնելու համար այստեղ այդ հարցը չենք քննարկի, այլ հիմք կընդունենք այն, որ այդ կարգավորումը համահունչ է միջազգային չափանիշներին⁴:

Մինչդեռատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար հիմնավոր կասկածի առկայությունն ունի հիմնարար նշանակություն, քանզի դրա բացակայության պայմաններում անձի ազատության ցանկացած սահմանափակում կհամարվի ի սկզբանե ապօրինի՝ անկախ այլ պայմանների առկայությունից: Այլ կերպ հիմնավոր կասկածի առկայությունը և հաստատվածությունը *sine qua non* պայման են կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար, ինչն ամրագրված է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում⁵: Խոսելով հանցագործություն կատարած լինելու **«հիմնավոր կասկածի»** մասին՝ Եվրոպական դատարանը դիրքորոշում է ձևավորել, որ **«կասկածի հիմնավորվածությունը»**, որին «համապատասխան պետք է իրականացվեն ձերբակալումը և կալանավորումը, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «c» ենթակետում սահմանված՝ կամայական ձերբակալության և կալանավորման

³ Այդ մասին մանրամասն տես Ավետիսյան Դ., Կալանավորման կիրառման իրավաչափության հիմնահարցերն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի // Պետություն և իրավունք, 2013 թ., թիվ 1/59/, էջեր 67-85:

⁴ Տես Նույն տեղում:

⁵ Տես LABITA v.ITALY, RUDNICHENKO V. UKRAINE, MAMEDOVA V. RUSSIA և այլն:

դեմ երաշխիքի կարևոր մասն է...»⁶: Այսինքն՝ ի սկզբանե հիմնավոր կասկածի առկայության պահանջը կոչված է երաշխիք ծառայելու կամայական ձերբակալման և կալանավորման դեմ: Այն յուրօրինակ երաշխիք է նաև արդար դատաքննության ապահովման համար, քանզի թույլ է տալիս ապահովագրել անձին՝ անհիմն կալանավորելուց հետո նրա նկատմամբ ճնշում գործադրելով խոստովանական ցուցմունք կորզելու, այլ անձանց դեմ ցուցմունք տալուն հարկադրվելու վտանգից, ինչպես նաև քրեական հետապնդման մարմիններին այնպիսի տեղեկություններ կամ տվյալներ հաղորդելուն հարկադրվելուց, որոնք կարող են հետագայում նրա կալանավորման կամ դատապարտման համար արդարացում ծառայել⁷: Ասվածից հետևում է, որ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դատարանի հետևությունները կասկածի հիմնավորվածության վերաբերյալ պետք է լինեն պատճառաբանված, այսինքն՝ կասկածը պետք է ունենա որևէ հիմնավորում⁸: Կասկածը չի կարող հիմնված լինել սոսկ այն հավաստիացման վրա, որ առկա է ստույգ, բայց և գաղտնի տեղեկություն⁹: Կալանքի հիմնավորվածության կարևոր տարրերից են կասկածների արժանահավատությունն ու բարեխղճությունը¹⁰: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ հիմնավոր կասկածը չի կարող հասկացվել վերացականորեն, այլապես այն կհիմաստազրկվի՝ չծառայելով իր նպատակին: Եվրոպական դատարանը մշակել է հիմնավոր կասկածի հիմնավորման որոշակի չափանիշ, որը հիմնվում է «փաստերի կամ տեղեկությունների առկայության վրա, որոնք հնարավորություն կտային անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լիներ հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում»¹¹: Դատարանը, մասնավորապես **Լաբզովն ընդդեմ Ռուսաստանի** 2002 թվականի փետրվարի 28-ի զանգատի ընդունման որոշման մեջ մեկնաբանելով «կասկածի աստիճանը» նշում է, որ քննչական մարմինները պարտավոր չեն հավաքել այնպիսի ապացույցների համակցություն, ինչպես մեղադրանք առաջադրելու դեպքում: Փաստերը, որոնք կասկած են առաջացնում, չպետք է օժտված լինեն այն աստիճան արժանահավատությամբ, որքան մեղադրանք առաջադրելու դեպքում, ինչպես նաև քրեական գործով վարույթի հետագա

⁶ Տե՛ս FOX, CAMPBELL AND HARTLEY v. THE UNITED KINGDOM, 1990թ. օգոստոսի 30-ի վճիռը, զանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86:

⁷ Տե՛ս ԶԶ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, հատոր 2-րդ, Երևան, 2013թ., էջ 350:

⁸ Տե՛ս Բրոգանը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (BROGAN AND OTHERS v. THE UNITED KINGDOM) գործով 1988թ. նոյեմբերի 29-ի վճիռը, զանգատներ թիվ 11209/84, 11234/84, 11266/84, 11386/85, կետ 53, և Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (MURRAY v. THE UNITED KINGDOM) գործով 1994թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, զանգատ թիվ 14310/88, կետ 55:

⁹ Տե՛ս FOX, CAMPBELL AND HARTLEY v. THE UNITED KINGDOM) գործով 1990թ. օգոստոսի 30-ի վճիռը, զանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32:

¹⁰ Տե՛ս Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (MURRAY v. THE UNITED KINGDOM) 1994թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, զանգատ թիվ 14310/88, կետ 61, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն, Երևան, 2005, էջ124:

¹¹ Տե՛ս Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի (K.-F. v. GERMANY) գործով 1997թ. նոյեմբերի 27-ի վճիռը, զանգատ թիվ 144/1996/765/962, կետ 57:

փուլերի ընթացքում:

Չարկ է նաև նկատել, որ Եվրոպական դատարանի սկզբնական շրջանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դատարանը հիմնավոր կասկածի բովանդակությունը ներկայացնում է հիմնականում փաստերի և տեղեկությունների կամ ապացուցման չափանիշի տեսանկյունից, մինչդեռ վերջին շրջանի նախադեպերում դատարանը որոշակիորեն ընդարձակել է հիմնավոր կասկածի բովանդակությունը և դրանում ներառել է նաև արարքի իրավաբանական գնահատականը:

Այս առումով ուշագրավ է հատկապես Խաչատրյան և այլք ընդդեմ Չայաստանի /զանգատ թիվ 23978/06/ գործով 2012թ. նոյեմբերի 27 վճիռը, որում դատարանը մասնավորապես արձանագրել է, որ անձին կարելի է կալանավորել 5-րդ հոդվածի 1-ին կետի /զ/ ենթակետի համաձայն միայն քրեական վարույթի համատեքստում համապատասխան իրավական մարմնի մոտ տանելու նպատակով նրա կողմից հանցանք կատարելու կասկածանքի հիման վրա...: Բացի փաստացի կողմը հաշվի առնելուց, որը հիմնականում քննարկման առարկան է, նման կասկածի լրացուցիչ պահանջները, որ փաստերը պետք է հիմնավոր լինեն, համաձայն ներպետական իրավունքի, կարող է պատճառաբանված կերպով համարվել **քրեական արարքը**: Այսպիսով, հստակորեն չի կարող լինել «հիմնավոր կասկած» այն դեպքում, երբ արարքները, որոնք սահմանվել են կալանավորված անձի նկատմամբ, չեն սահմանում հանցակազմ այն ժամանակ, երբ կատարվել են այդ արարքները (տե՛ս *Kandzhov v. Bulgaria*, թիվ 68294/01, par. 57, 2008 թվականի նոյեմբերի 60): Չետևաբար, դատարանը պետք է քննի այն հարցը, թե արդյոք դիմումատուների ձերբակալումը և կալանքը եղել են «օրինական»՝ համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի, և արդյոք նրանց՝ ազատությունից զրկելը հիմնված է եղել իրենց կողմից կատարած «հանցանքի» հիմնավոր կասկածի վրա:

(...) Դատարանը նշում է, որ այն ժամանակ, երբ դիմումատուները կատարել են վերոնշյալ արարքները՝ այլընտրանքային ծառայության վայրը ինքնական լքելը, ըստ Չայաստանի օրենսդրության չի համարվել հանցանք: Նման հանցանք ներառվել է ՔՕ-ում միայն 2006 թվականի հունիսի 1-ից, որը ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 1-ին, իսկ սա հաջորդում է սույն գործի հանգամանքներին: Սա իրականում սահմանվել է ներպետական մակարդակում, մասնավորապես Գլխավոր դատախազի կողմից, ով այս հիմքերով դիմումատուների գործերը ներպետական դատարաններում լրացուցիչ քննության ուղարկելուց հետո որոշեց դադարեցնել քրեական վարույթները: ՔՕ-ի 361 և 362 հոդվածները վերաբերել են միայն ծառայություն իրականացնողներին և սխալմամբ են կիրառվել դիմումատուների նկատմամբ: **Փաստորեն, դիմումատուների այն արարքները, որոնց համար նրանք մեղադրվել են, և որոնք հիմք են հանդիսացել նրանց կալանքի համար, տվյալ ժամանակահատվածում գործող ներպետական իրավունքի համաձայն՝ հանցանք չեն համարվել: Դատարանը հետևաբար եզրակացնում է, որ դիմումատուներին ազատությունից զրկելը հիմնված չի եղել իրենց կողմից կատարած «հանցանքի» հիմնավոր կասկածի վրա 4-րդ մեծիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի /զ/ ենթակետի իմաստով»:**

Ինչպես տեսնում ենք, ՄԻԵԴ-ը հիմնավոր կասկածի բովանդակությունը չի սահմանափակում միայն անձին մեղսագրվող արարքի փաստական կողմի վերաբերյալ փաստերի կամ տեղեկատվության առկայությամբ, այլ դրան հավելում է նաև այդ փաստերին տրված իրավական գնահատականը՝ արարքի որակումը: Դատարանի դիրքորոշումից աներկբայորեն հետևում է, որ կալանք կիրառող մարմինները պարտավոր են նախևառաջ անձին մեղսագրվող արարքներին գնահատական տալ քրեաիրավական տեսանկյունից

և որոշեն, թե արդյոք անձին մեղսագրվող արարքը պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված համապատասխան հանցակազմի հատկանիշներ, թե ոչ, և դրանից հետո որոշեն կալանք կիրառելու այլ հիմքերի և պայմանների առկայության կամ բացակայության հարցը: Ասվածից հետևում է, որ եթե խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման փուլում անձին մեղսագրվող արարքը չի պարունակում քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցակազմի հատկանիշներ, կամ, ինչպես ՄԻԵԴ-ն է նշում, բացակայում է կատարած «հանցանքի» հիմնավոր կասկածը, ապա այդ պայմաններում կալանքի կամ այլ խափանման միջոցի կիրառումը կդիտվի անօրինական և կամայական ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 1-ին մասի /գ/ ենթակետի իմաստով՝ անկախ այլ պատճառաբանություններից: Այստեղից հետևություն, որ Եվրոպական դատարանը կանոն է սահմանում այն մասին, որ ազգային դատարանները պարտավոր են կալանքի միջնորդության քննարկման փուլում «հիմնավոր կասկած» հասկացության շրջանակներում ստուգեն անձին մեղսագրվող արարքի իրավաբանական որակման իրավաչափությունը: Սա, բնականաբար, պետք է իր արտացոլումը գտնի ներպետական օրենսդրությունում կամ զոնե դատական պրակտիկայում:

Հարկ է նկատել, որ հիմնավոր կասկածի վերաբերյալ վերոնշյալ մեկնաբանությունները կիրառվում են նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում:

Վահրամ Գևորգյանի վերաբերյալ 2011 թ. փետրվարի 24-ի ԵԿԴ/0678/06/10 որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «/.../ Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է: Հիմնավոր կասկածի հետ մեկտեղ կալանավորման պայմաններ են նաև համապատասխան քրեաիրավական որակմամբ հարուցված քրեական գործի առկայությունը, գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը, որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը: Մեկնաբանելով անձի ազատության սահմանափակման համար անհրաժեշտ պայմանը՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավոր կասկած առ այն, որ նա իրավախախտում է կատարել, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքում կասկածը պետք է լինի ողջամիտ: Դիրքորոշում սահմանելով այն մասին, որ կասկածը պետք է լինի ողջամիտ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **«հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած»** ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում են այն ենթադրյալ հանցանք

քին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին»:

Ինչպես տեսնում ենք, Վճռաբեկ դատարանը ևս հիմնավոր կասկած հասկացության բովանդակությունը չի սահմանափակում միայն հանցագործության փաստական կողմի վերաբերյալ փաստերի կամ տեղեկությունների առկայությամբ: Հիմնավոր կասկած հասկացության բովանդակության մեջ դատարանը մտցնում է նաև արարքի իրավական որակունը և բնականաբար դրանց իրավաչափությունը նախաքննական մարմնի կողմից հիմնավորելը, իսկ դատարանի կողմից ստուգելը: Սակայն մեկ այլ որոշման մեջ դատարանը որոշակի սահմաններ է դնում անձին մեղսագրվող արարքին տված իրավաբանական գնահատականը ստուգելու հարցում դատարանի իրավասության սահմանների մասով:

Այսպես, Հ. Խաչատրյանի վերաբերյալ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի ՏԳ2/0009/06/11 որոշման մեջ, զարգացնելով Վ. Գևորգյանի որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները և ելնելով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում հիմնավոր կասկածի սահմանները որոշելու հարցի կարգավորման անհրաժեշտությունից, Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանում են արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր: Եթե մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն անդրադառնալ այդ հարցերին և որոշում կայացնի դրանց վերաբերյալ, ապա կխախտվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառնությունների տարանջատման սկզբունքը, իսկ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կվերածվի բուն արդարադատության իրականացման գործընթացի: Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան»:

Այս որոշման մեջ դատարանը որոշակի զգուշություն է ցուցաբերում հիմնավոր կասկածի բովանդակության և սահմանների որոշման հարցում և փորձում է որոշակի չափանիշներ սահմանելով հստակեցնել հիմնավոր կասկածի բովանդակությունը և սահմանները ստուգելու և գնահատելու դատարանի իրավասությունները: Վճռաբեկ դատարանի մտահոգությունները հասկանալի և ընդունելի են, քանի որ, իրոք, խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքում կայացված որոշման մեջ դատարանների կողմից անձին ներկայացված մեղադրանքի էությանը և հիմնավորվածությանը

գնահատական տալը կարող է խնդիրներ առաջացնել քրեական գործի հետագա ընթացքում: Եթե դատարանը կալանքի միջնորդության քննարկման ընթացքում անդրադառնա անձին մեղսագրվող արարքի ճիշտ որակման և փաստերի հիմնավորվածության հարցերին, ապա դա կարող է կանխորոշել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններում քրեական գործի վերջնական ելքը, այսինքն՝ դատարանի գնահատականները դառնան նախադատելի քննիչի, դատախազի համար նախաքննության փուլում, իսկ դատարանի համար՝ քրեական գործն ըստ էության քննելու ընթացքում: Մինչդեռ դա չի բխում քրեական դատավարության փուլային կառուցվածքից և մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի նպատակներից: Ի վերջո, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը նպատակ ունի ապահովելու դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը կամ դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում¹², սակայն ոչ քրեական գործի ելքի կանխորոշումը:

Այդուհանդերձ գտնում ենք, որ հենց այդ նույն նպատակների (մարդու իրավունքների պաշտպանության) տեսանկյունից կալանքի միջնորդությունը քննող դատարանը չպետք է կաշկանդված լինի խափանման միջոց ընտրելիս անձին մեղսագրվող արարքի փաստական և իրավական կողմին գնահատական տալուց, հատկապես եթե այդ գնահատականներից ուղակիորեն կախված է մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցի տեսակի հարցը: Եթե Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումը գործող օրենքի տեսանկյունից իրավաչափ է և կարծեք թե պրակտիկայում խնդիրներ չի առաջացնում, ապա նույնը չի կարելի ասել Նախագծի կանոնակարգումների տեսանկյունից: Ի տարբերություն գործող օրենսդրության, որը չի նախատեսում կալանքի կիրառում զուտ հիմնավոր կասկածի հիմքով, անհրաժեշտ են նաև այլ հանգամանքներ: Նախագծում միայն հիմնավոր կասկածը բավարար է ծանր և առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձանց նկատմամբ կալանք կիրառելու համար: Ուստի այստեղ Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումը կարող է որոշակի խնդիրներ առաջացնել մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ քրեական օրենսգրքում կան մի շարք հանցակազմեր, որոնց որակման հարցում նույնիսկ չեն անճշտությունը, իսկ անբարեխիղճ իրավակիրառողի տեսանկյունից՝ նաև դիտավորյալ սխալը կարող են միջին ծանրության հանցագործությունը վերածել ծանր հանցագործության և որպես արդյունք ապահովել առանց լրացուցիչ հիմնավորումների մեկ ամիս ժամկետով կալանքի կիրառումը: Որպես ասվածի դասական օրինակ կարելի է նշել կողոպուտի և ավազակության հանցակազմերի որակման առանձնահատկությունները: Այս պայմաններում կարծեք թե արարքի որակման իրավաչափությունը ստուգելը կալանքի միջնորդության քննարկման փուլում դառնում է անհրաժեշտություն: Այս դատողության օգտին է խոսում նաև Նախագծում առկա մեկ այլ կանոնակարգում ևս: Ըստ Նախագծի 295-րդ հոդվածի՝ խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդության քննության արդյունքում դատարանը կայացնում է միջնորդությունը մերժելու մասին որոշում, եթե չի ապացուցվում մեղադրյալին վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը, կամ հայտնաբերում է սույն օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված որևէ հանգամանք: Նախագծի 12-րդ

¹² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թ. ապրիլի 10-ի՝ Ներսես Միսակյանի վերաբերյալ ԱՐԴ1/0003/11/08 որոշումը:

հողվածը սահմանում է քրեական հետապնդումը բացառող հանգամանքները: Այսինքն՝ դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում ստուգի դրանց առկայությունը կամ բացակայությունը, որպեսզի դրանից հետո որոշի կալանք ընտրելու կամ չընտրելու հանգամանքը, իսկ դրանք ստուգելը առնվազն ենթադրում է գնահատել ինչպես արարքի փաստական, այնպես էլ իրավական կողմը: Օրինակ, դժվար է պատկերացնել, թե դատարանն ինչպես կարող է գնահատել, թե արդյոք անձի արարքում հանցակազմ կա, թե ոչ՝ առանց հանցակազմի վերլուծության և գնահատման:

Այս առումով պետք է համաձայնել Ե.Վ. Միրոնովայի այն կարծիքին, որ կասկածի հիմնավորվածությունը ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության փուլում ենթակա է քննարկման քրեական հետապնդման գործունեություն իրականացնելու քրեադատավարական ձևի և քրեական գործում առկա ապացույցների համակցության տեսանկյունից, որոնք հաստատում են հանցագործության դեպքը և անձի առնչությունը դրան: Կասկածի հիմնավորվածությունը կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս հաստատվում է իրականացվող քրեական հետապնդման հիմնավորվածության և օրինականության միջոցով¹³:

Այսինքն, անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցած լինելը խափանման միջոց կիրառելու պարտադիր պայման է, որը անձի իրավունքների լրացուցիչ երաշխիք է: Անձի սահմանադրորեն պաշտպանվող իրավունքների և ազատությունների սահմանափակման համար անհրաժեշտ է իրավակիրառողի համոզմունքը, որ անձի նկատմամբ կալանքը չի կիրառվելու, եթե նա առնչություն չունի իրեն մեղսագրվող հանցագործությանը, իսկ մեղսագրվող հանրորեն վտանգավոր արարքը կատարված է և որակված է ճիշտ, որի պայմաններում անձին մեղսագրվող արարքը համարվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն: Այստեղից էլ հետևություն, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս անհրաժեշտ է ստուգել անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման հիմնավորվածությունը, մասնավորապես՝ գործում առկա ապացույցների բավարար համակցությունը, որը հաստատում է հանցանքի կատարման փաստը և մեղադրյալի առնչությունը այդ հանցանքի կատարմանը: Սակայն դա պետք է անել այնպիսի լրացուցիչ կանոններ սահմանելու ճանապարհով, որպեսզի կասկած չառաջանա քրեական դատավարության փուլային կառուցվածքի գաղափարախոսությունը խախտելու, ինչպես նաև դատական վերահսկողության շրջանակներում փաստացի արդարադատություն իրկանացանելու վերաբերյալ: Այսինքն՝ անհրաժեշտ է վերոնշյալ հարցերի հաշվառմամբ հավասարակշռված լուծում, որպեսզի մի դեպքում չխախտվեն դատավարության փուլային կառուցվածքը, և դատարանը մինչդատական վարույթի շրջանակներում չիրականացնի արդարադատությանը բնորոշ գործառույթ, մյուս դեպքում՝ չխախտվեն անձի իրավունքներն ու օրինական շահերը, որոնց հետագա դատական պաշտպանությունը կարող է լինել ուշացած: Ասվածի հիման վրա առաջարկում ենք առանձին կանոն սահմանել այն մասին, որ խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննարկման կապակցությամբ դատարանի եզրահանգումները հիմնավոր կասկածի, մեղադրանքի կամ խափանման միջոց կիրառելու հետ կապված այլ հանգամանքների վերաբերյալ չեն կարող հետագայում նախադատելիություն ունենալ քննիչի, դատախազի կամ դատարանի համար այդ կամ այլ քրեական գործի քննության ըն-

¹³ St`u Миронова Е. В., Производство по решению вопроса о мере пресечения в виде заключения под стражу в судебных стадиях Российского уголовного процесса, Томск, 2010, с. 43-46:

թացքում¹⁴:

Այս լուծումն իրավաչափ է այնքանով, որքանով դատարանին հնարավորություն է տալիս առանց կաշկանդվելու գնահատելու մեղադրյալին մեղսագրվող արարքի փաստական և իրավական կողմը, պարտադիր չէ, որ դատարանն անդրադառնա անձի մեղավորությանը, սակայն անգամ այդ հարցի վերաբերյալ դատարանի դատողությունները խնդիրներ չեն առաջացնի անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ այդ դատողությունները չեն կարող որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից օգտագործվել հետագա վարույթի ընթացքում: Այս տեսանկյունից ընդունելի պետք է համարել ՌԴ Սահմանադրական դատարանի 2005 թ. մարտի 22-ի թիվ 4 որոշման մեջ արտահայտած այն դիրքորոշումը, որ խափանման միջոց կիրառելու իրավական և փաստական հիմքերը կապված չեն անձին առաջադրված մեղադրանքը պաշտպանելու, առավել ևս այն հիմնավոր ճանաչելու հետ, այլ պայմանավորված են քրեական գործի հետագա վարույթն ապահովելու անհրաժեշտությամբ¹⁵: Հետևաբար, դատարանն այդ փուլում անդրադառնում է մեղադրանքի փաստական և իրավական կողմին այնքանով, որքանով իր նպատակն է քրեական վարույթի բնականոն ընթացքն ապահովելը, այլ ոչ թե անձի դատապարտմանը հասնելը: Ելնելով իրավաչափ կալանք կիրառելու անհրաժեշտության գաղափարից և հիմք ընդունելով մեր առաջարկած կանոնը՝ գտնում ենք, որ որևէ խոչընդոտ չի կարող լինել խափանման միջոց կալանք կիրառելու ընթացքում անձին մեղսագրվող արարքի փաստական և իրավական կողմի հիմնավորվածության ստուգումը դատարանին վերապահելը:

REASONABLE DOUBT AS A CONDITION FOR ENFORCEMENT OF COERSIVE MEASURES ACCORDING TO THE DRAFT CRIMINAL PROCEDURE CODE

Davit Avetisyan

*Chairman of the Chamber on Criminal Cases of the Court of Cassation of the RA
PhD in Law, Associate Professor*

"Reasonable doubt" is a condition which is obligatory in the process of enforcement of coercive measures. It is also an additional guarantee for protection of fundamental rights and freedoms of the person, who is involved in criminal procedure. The law enforcement body should be confident that the detainee is charged with a serious crime.

In the light of above mentioned argumentation, the author concluded that before executing coercive measures, namely, detention, the law enforcement body should find out whether there are sufficient grounds for criminal prosecution, i.e. whether there is sufficient evidence to say that the person involved in the criminal procedure is related to the committed crime. He also mentioned that in the process of enforcement of coercive

¹⁴ Հարկ է նկատել, որ այսպիսի լուծում է տրված Ուկրաինայի 2012թ. քրեական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածում // <http://kodeksy.com.ua/ka/upku-2012/statja-198.htm>

¹⁵ Ст'ю Халиулин А. Г., Заключение под стражу: законность и необходимость // Уголовный процесс. 2008. № 7, С. 63-64.

measures law enforcement body should keep balance in order to break the structure of criminal procedure, or to violate the rights and legal interests of the person.

The author suggests additional regulation which says that court's conclusions which concern to reasonable doubt and other circumstances of the charge and coercive measures shouldn't be prejudicial for law enforcement and judge in later stages of the criminal procedure.

ОБОСНОВАННОЕ СОМНЕНИЕ, КАК УСЛОВИЕ ПРАВОМЕРНОСТИ ПРИМЕНЕНИЯ МЕР УГОЛОВНО- ПРОЦЕССУАЛЬНОГО ПРИНУЖДЕНИЯ, СОГЛАСНО ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА

Давит Аветисян

*Председатель Палаты по Уголовным Делах Кассационного Суда РА
Кандидат юридических наук, доцент*

"Обоснованное сомнение" – это обязательное условие применения мер уголовно-процессуального принуждения. Оно является также дополнительной гарантией защиты основных прав и свобод человека, так как предполагает наличие уверенности в том, что задержанный имеет отношение к тяжкому или особо тяжкому преступлению.

В свете данной аргументации, автор приходит к выводу, что до применения мер уголовно-процессуального принуждения, в частности содержания под стражей, правоохранительные органы должны выяснить есть ли достаточно оснований для уголовного преследования, то есть имеются ли достаточные доказательства того, что человек причастен к предполагаемому преступлению. Автор отмечает, что в процессе применения мер уголовно-процессуального принуждения должен быть баланс между необходимостью сохранения структуры уголовного процесса и защиты прав и законных интересов человека.

Автор предлагает дополнительное регулирование, согласно которому, выводы суда, относительно обоснованного сомнения и других обстоятельств обвинения и применения мер уголовно-процессуального принуждения на поздних стадиях уголовного процесса на должны иметь преюдициального значения.

Քանալի բաներ – հիմնավոր կասկած, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունք, խափանման միջոց, իրավաչափության պայման, կասկածի հիմնավորվածություն, կասկածի աստիճան:

Keywords: reasonable doubt, draft of new Criminal Procedure Code of RA, case law of Cassation Court of RA, coercive measure, condition of regularity, validity of doubt, degree of doubt.

Ключевые слова: обоснованное подозрение, законопроект нового уголовно-процессуального кодекса РА, прецедентное право Кассационного суда РА, мера уголовно-процессуального принуждения, условие закономерности, обоснованность подозрения, степень подозрения.